ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՍԵՅՐԱՆԻ

«ՄԱՐԴՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

ժԲ.00.02 Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

ЕВРОПЕЙСКИЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ

НААПЕТЯН АРТУР СЕЙРАНОВИЧ

"КОНСТИТУЦИОННЫЕ ОСНОВЫ ПРАВА НА ФИЗИЧЕСКИЙ И ПСИХИЧЕСКИЙ ИММУНИТЕТ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ"

12.00.02 Публичное право: (конституционное, административное; финансовое; муниципальное; экологическое; европейское право; государственное управление) диссертация на соискание ученой степени кандидатаюридических наук по специальности

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2023

Ատենախոսության թեման հաստատվել է
Հայաստանի եվրոպական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր **Ա.Հ. Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր **Գ.Բ. Դանիելյան**
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ **Ռ.Ջ. Մախմուդյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. մայիսի 23-ին ժ. 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի 001 իրավաբանական մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան, 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2023 թ. ապրիլի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ.Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Европейском университете Армении

Научный руководитель: доткор юрид. наук,
профессор **А.А. Хачатрян**

Официальные оппоненты: доктор юрид. наук,
профессор **Г.Б. Даниелян**
кандидат юрид. наук,
доцент **Р.Дж. Махмудян**

Ведущая организация: **Академия управления РА**

Защита состоится 23-ого мая 2023 г. в 14^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, Алека Манукяна, 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 13-ого апреля 2023 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, ассистент **Ж.А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ենթարկվեց էական փոփոխությունների:

Այդ փոփոխություններն առնչվում էին նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին՝ հստակեցնելով և առավել մանրամասնելով հիմնական իրավունքներին նվիրված դրույթները, սահմանափակման դեպքերը, հիմքերը, ինչպես նաև այդ սահմանափակումների հիմքում դրված սկզբունքները և պետության պարտականությունը՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Փոփոխությունների արդյունքում ՀՀ սահմանադրության 25-րդ հոդվածը ոչ միայն 1-ին մասում ամրագրեց ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը որպես ինքնուրույն իրավունք, այլև 2-րդ մասում ամրագրեց այն դեպքերը, երբ օրենսդիրը կարող է սահմանափակել մարդու այս հիմնական իրավունքը:

Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրեց գործունեության այնպիսի տեսակներ՝ բժշկության և կենսաբանության ոլորտներում եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնել մարդու ոչ միայն ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի, այլ նաև այլ հիմնական իրավունքների խախտմանը:

Իսկ նույն հոդվածի 4-րդ մասն ամրագրեց այն նվազագույն երաշխիքները, որոնց առկայության պայմաններում է միայն հնարավոր մարդուն գիտական, բժշկական կամ այլ փորձերի ենթարկելը:

Այս փոփոխություններն առաջ են բերում ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, դրա երաշխավորումը, այս ոլորտը կարգավորող օրենսդրությունը նորովի դիտարկելու անհրաժեշտություն՝ հաշվի առնելով նաև այս ոլորտում այլ երկրների և միջազգային կազմակերպությունների կուտակած փորձը և լավագույն պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է հանդիսանում ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ ամբողջական պատկերացում ձևավորելը, նշված իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորությունների շրջանակը, երաշխիքների համակարգը և իրացման կառուցակարգերը հստակեցնելը, ինչպես նաև դրանց կատարելագործմանն ուղղված առաջարկներ ներկայացնելը: Հետազոտության նշված նպատակին հասնելու համար լուծվում են հետևյալ խնդիրները.

- սահմանել ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը,
- հստակեցնել ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորությունների շրջանակը,
- հստակեցնել ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի երաշխավորման հարցում հանրային իշխանության պարտականությունների շրջանակը,
- սահմանել հոգեկան անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը,
- հստակեցնել հոգեկան անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորությունների շրջանակը,
- հստակեցնել հոգեկան անձեռնմխելիության իրավունքի երաշխավորման հարցում հանրային իշխանության պարտականությունների շրջանակը,
- հստակեցնել ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման շրջանակները,
- հստակեցնել եվգենիկական փորձերի սահմանադրական բովանդակությունը,
- հստակեցնել մարդու օրգանները և հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու արգելքը երաշխավորելու կառուցակարգերը,
- հստակեցնել մարդուն գիտական, բժշկական կամ այլ փորձերի ենթարկելու թույլատրելի շրջանակները:

Նշյալ խնդիրները լուծելու համար հետազոտվելու են ինչպես իրավական փաստաթղթեր՝ միջազգային պայմանագրեր և այլն, այնպես էլ՝ տեսական աղբյուրներ:

Այդ խնդիրների լուծման արդյունքը պետք է լինի քննարկվող ոլորտում հիմնական իրավունքների բովանդակության հստակեցումը և առկա որոշակի խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների ներկայացումը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրացման, երաշխավորման, սահմանափակման, խախտվելու դեպքում վերականգման հետ կապված հասարակական հարաբերություններն են: Հետազոտության առարկան ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրացման, երաշխավորման, սահմանափակման, խախտվելու դեպքում վերականգնման հետ կապված հասարակական հարաբերությունները կանոնակարգող ինչպես միջազգային իրավական, այնպես էլ ազգային իրավական նորմերն են:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքին, դրա իրացման և պաշտպանության հիմնախնդիրներին նվիրվել են բազմաթիվ աշ-

խատանքներ թե՛ հետխորհրդային, թե՛ արտասահմանյան իրավագետների կողմից: Հայաստանի Հանրապետության իրավագետների կողմից նույնպես հրապարակվել են որոշ աշխատանքներ նվիրված քննարկվող իրավունքի հետ կապված այս կամ այն խնդրին:

Սակայն, Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը՝ որպես սահմանադրական իրավունք, դեռևս համալիր կերպով հետազոտված չէ:

Ատենախոսության մատենագիտական աղբյուրներից հատկապես կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի հիմնախնդիրներին նվիրված հետազոտությունները՝ իրականացված ինչպես առանձին գիտնականների, այնպես էլ գիտնականների խմբի կամ միջազգային կազմակերպությունների կողմից:

2. Հայաստանի Հանրապետության և այլ երկրների սահմանադրությունները, ինչպես նաև այդ սահմանադրությունների հիման վրա ՀՀ և տարբեր այլ երկրների սահմանադրական դատարանների որոշումները:

3. Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում ընդունված միջազգային փաստաթղթերը և դրանց նվիրված պարզաբանումները:

4. Եվրոպայի խորհրդի շրջանակում ընդունված կոնվենցիաները, դրանց կից լրացուցիչ արձանագրությունները, ինչպես նաև այդ կոնվենցիաների և լրացուցիչ արձանագրությունների բացատրական զեկույցները:

5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները և դրանց հիման վրա ձևավորված դատական պրակտիկան:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիաները և այլ իրավական ակտեր, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դատական ակտերը, Սերբիայի, Սլովենիայի, Մոլդովայի, Ռումինիայի, Բելգիայի, Խորվաթիայի, Իտալիայի և այլ երկրների՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերը և դատական պրակտիկան:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր՝ ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ, այնպես էլ հատուկ՝ կառուցվածքային-գործառնական, համեմատական-իրավական, ֆորմալ-իրավական, համակարգային, նպատակային մեկնաբանման մեթոդները: Այս մեթոդների օգտագործումը հնարավորություն է տվել հստակեցնել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության

իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը, ինչպես նաև մշակել համապատասխան առաջարկներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կատարելագործելու նպատակով:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հանդիսանում է ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման համալիր հետազոտություն, որտեղ առանձին-առանձին տրվել են ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի հեղինակային սահմանումները, հեղինակի կողմից հստակեցվել են ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորությունների շրջանակը, քննարկման առարկա են դարձվել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի երաշխավորման հարցում հանրային իշխանության պարտականությունները, նշված իրավունքի ապահովման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ամրագրելու հիմնախնդիրները, ինչպես նաև այն դեպքերը, երբ արգելվում է միջամտել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին կամ թույլատրվում է միջամտել որոշակի երաշխիքների ապահովման պայմաններում:

Աշխատանքում ներակայցվել են նաև նշված ոլորտում ՀՀ օրենսդրության կատարելագործմանն ուղղված որոշ առաջարկներ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Սույն թեկնածուական ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝

1. Ատենախոսությունում համակարգված ձևով հիմնավորվել է այն, որ սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում ֆիզիկական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքն ընկալվում է որպես պետության կողմից ճանաչված և երաշխավորվող իրավազորությունների ամբողջություն, որն ուղղված է անձի մարմնի ամբողջականությունը երաշխավորելուն, անձի կողմից իր հայեցողությամբ սեփական մարմնի ճակատագիրը որոշելուն, դրան որևէ ոչ իրավաչափ միջամտություն թույլ չտալուն:

2. Ատենախոսությունում բացահայտելով ֆիզիկական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի բովանդակությունը կազմող տարրերի էության ու նշանակության հիմնահարցերը՝ կատարվել է հետևյալ եզրահանգումը, որ խնդրո առարկա իրավունքի բովանդակությունը կազմում են առնվազն հետևյալ իրավազորությունները. ա) ազատորեն որոշել իր մարմնի ճակատագիրը. բ) պաշտպանել և վերահսկել իր

մարմինը. գ) ազատորեն և իր կամքին համապատասխան տնօրինել իր սեռական կյանքը. դ) պետությունից պահանջել, որ հանրային իշխանության որևէ մարմին կամ պաշտոնատար անձ ոչ իրավաչափ չմիջամտի մարդու մարմնին հետևապես և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին. ե) պետությունից պահանջել, որ արդյունավետ միջոցներ ձեռնարկի, որպեսզի որևէ այլ սուբյեկտ չմիջամտի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին. զ) պետությունից պահանջելու, որ արդյունավետ իրավական միջոցներ ձեռնարկվեն ֆիզիկական անձեռնմխելիության խախտված իրավունքը վերականգնելու և պատճառված վնասը փոխհատուցելու համար:

Բացի դրանից, ատենախոսության մեջ հիմնավորվել է նաև հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրավական բովանդակությունը:

Ըստ այդ բովանդակության՝ այն դիտարկվում է իբրև պետության կողմից ճանաչված և երաշխավորվող իրավազորությունների ամբողջություն, որը կոնկրետ անձին հնարավորություն է տալիս իր զարգացվածության, կրթվածության, պատկերացումների հիման վրա առանց որևէ ոչ իրավաչափ արտաքին ազդեցության զարգացնել իր հոգեկան աշխարհի մտավոր, զգացմունքային, կամային և գիտակցական ոլորտները, ձևավորել սեփական ինքնությունը, հաստատել և զարգացնել հարաբերություններ այլ մարդկանց ու արտաքին աշխարհի հետ:

3. Ատենախոսությունում հիմնավորվել է այն եզրահանգումն ըստ որի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ հարգանքը և դրա պաշտպանությունը դիտարկվում են որպես հանրային իշխանության պարտականություն, որը ներառում է վերջիններիս կողմից իրականացվող հետևյալ գործողությունների շրջանակը. ա) այդ մարմինները և նրանց պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ ֆիզիկական անձեռնմխելիության բովանդակությունը կազմող իրավազորություններից որևէ մեկին միջամտելուց՝ բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակման դեպքերի, և այն չափով, ինչ չափով, որ թույլ են տալիս համաչափության և իրավական որոշակիության սկզբունքները. բ) այդ մարմինները պարտավոր են արդյունավետ ընթացակարգեր և կառուցակարգեր ամրագրել, որոնք և՛ օրենսդրական մակարդակում, և՛ գործնականում կերաշխավորեն, որ ցանկացած անձ ձեռնպահ մնա ֆիզիկական անձեռնմխելիության բովանդակությունը կազմող իրավազորություններից որևէ մեկին ոչ իրավաչափ միջամտելուց. գ) այդ մարմինները ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին առնչվող գործու-

նեություն իրականացնող սուբյեկտներին թույլտվություն տրամադրելիս կամ լիազորություն պատվիրակելիս պարտավոր են ամրագրել այնպիսի պահանջներ, որոնք տվյալ գործունեության ընթացքում կերաշխավորեն ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ հարգանքը. դ) բնապահպանական ոլորտը կարգավորելիս այդ մարմիններն իրենց հանրային քաղաքականությունը և դրա հիման վրա կոնկրետ գործընթացները պետք է այնպես կազմակերպեն, որ անձի առողջության վրա դրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասնի. ե) այդ մարմինները պարտավոր են իրավական արդյունավետ միջոցներ ձեռնարկել ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին ոչ իրավաչափ միջամտությունը կանխելու, իսկ արդեն խախտված իրավունքի դեպքում՝ դրա արդյունավետ վերականգնումը և դրա հետևանքով պատճառված վնասի, ներառյալ՝ բարոյական վնասի փոխհատուցումը երաշխավորելու համար:

4. Աշխատանքում հիմնավոր է համարվել է այն եզրահանգումը, ըստ որի՝ որպեսզի մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու արգելքը գործնականում երաշխավորվի, անհրաժեշտ է լիարժեք կանոնակարգել օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման ողջ գործընթացը, այդ թվում՝ ա) օրենսդրությամբ հստակ սահմանել օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման գործընթացի բոլոր մասնակիցների՝ բժշկական անձնակազմի, բուժքույրական անձնակազմի, տեխնիկական անձնակազմի, միջնորդների և այս գործընթացին որևէ կերպ առնչվող անձանց իրավունքները և պարտականությունները. բ) բոլորի համար ստեղծել հավասար պայմաններ օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման գործընթացից օգտվելու համար. գ) միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ կատարելագործել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցները (այդ թվում՝ քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերը) բոլոր այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք որևէ եղանակով կկազմակերպեն, կնպաստեն օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելուն. դ) որպես օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու դեպքեր չեն կարող դիտարկվել այն փոխհատուցումները, վճարումները, ողջամիտ պարգևները, որոնք կապված են մի կողմից փոխպատվաստման արդյունքում անձի ունեցած կորուստների հետ (չստացած աշխատավարձը կամ օրինական այլ եկամուտը, որն անձը կստանար որպես դոնոր հանդես չգալու դեպքում, ինչպես նաև օրգաններ կամ հյուսվածքներ վերցնելուց հետո անձի առողջությունը պահպանելուն ուղղված ծախսեր) և մյուս կողմից՝ օրգանների պահպանման,

փոխադրման, դեղորայքի, տեխնիկական սպասարկման ապահովման ծախսերի հետ:

5. Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի նպատակի հիմնախնդրի հետազոտության շրջանակում աշխատության մեջ հիմնավորվել է տեսակետը, որ այն կոչված է ապահովել պետության կողմից երաշխավորված՝ մարդու հոգեկան անվտանգությունը, որը ներառում է հանրային իշխանության մարմինների, դրա պաշտոնատար անձանց կամ այլ անձանց կողմից այդ իրավունքին միջամտելու արգելքը, միջամտության կանխումը և դրա համար պատասխանատվությունը՝ բացառությամբ միջամտության՝ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի և կարգի: Մասնավորապես, այդ նպատակի իրականացումը ենթադրում է հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունների հետևյալ շրջանակը. ա) ձեռնպահ մնալ հոգեկան անձեռնմխելիության բովանդակությունը կազմող իրավազորություններից որևէ մեկին միջամտելուց՝ բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակման դեպքերի, և այն չափով, ինչ չափով, որ թույլ են տալիս համաչափության և իրավական որոշակիության սկզբունքները. բ) արդյունավետ ընթացակարգեր և կառուցակարգեր ամրագրել, որոնք և՛ օրենսդրական մակարդակում, և՛ գործնականում կերաշխավորեն, որ ցանկացած անձ ձեռնպահ մնա հոգեկան անձեռնմխելիության բովանդակությունը կազմող իրավազորություններից որևէ մեկին ոչ իրավաչափ միջամտելուց. գ) իրավական արդյունավետ միջոցներ ձեռնարկել հոգեկան անձեռնմխելիության իրավունքին ոչ իրավաչափ միջամտությունը կանխելու, իսկ արդեն խախտված իրավունքի դեպքում դրա արդյունավետ վերականգնումը և դրա արդյունքում պատճառված վնասի, ներառյալ՝ ոչ գույքային վնասի փոխհատուցումը երաշխավորելու համար:

6. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքների հարաբերակցության վերաբերյալ ատենախոսությամբ ձևակերպվել է հետևյալ բանաձևը.

«Հոգեկան առողջության» օրենսդրական սահմանման մեջ ներառված իրավազորությունների շրջանակը համընկնում է «հոգեկան անձեռնմխելիության» իրավունքի իրավազորությունների շրջանակի հետ, չնայած որ հոգեկան առողջությունը հոգեկան անձեռնմխելիության իրավունքի բաղկացուցիչ մաս է, այլ ոչ թե համարժեք հասկացություն: Բացի այդ, հոգեկան առողջության պահպանումը հոգեկան առողջության ոլորտում հոգեկան խանգարումների կանխարգելումն է և այդ նպատակով համապատասխան աշխատանքների կազմակերպումն ու իրականացու-

մը, որի շրջանակներից դուրս է մնում հոգեկան առողջության վրա հոգեկան խանգարումներից բացի այլ ազդեցությունները հանրային իշխանության մարմինների կամ այլ անձանց կողմից: Օրենսդրական փոփոխությունների միջոցով անհրաժեշտ է ամրագրել ոչ թե անձնական անձեռնմխելիության իրավունք, այլ հոգեկան անձեռնմխելիության իրավունք, իսկ գործընթացներն այնպես կարգավորել, որ օրենքը բավարարի իրավունքի գերակայության սկզբունքի մաս կազմող իրավական որոշակիության սկզբունքին:

7. Բացի դրանից, հաշվի առնելով սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում հետազոտման առարկայի առանցքային դերակատարությունը՝ ատենախոսության մեջ հիմնավոր է համարվել այն եզրահանգումը, որ մարդու ազատ և հստակ արտահայտած համաձայնության պայմաններում ՀՀ Սահմանադրությունը սկզբունքորեն չի արգելում մարդուն ենթարկել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Սահմանադիրը թեև շեշտադրում է «գիտական» կամ «բժշկական» հասկացությունները, սակայն դրանով չի սահմանափակվում և ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի գործողությունը տարածում է ցանկացած ոլորտի ցանկացած փորձի վրա՝ սոցիալական, տնտեսական, հոգեբանական և այլն՝ գիտական, թե ոչ: Ընդ որում, ցանկացած փորձ, որը որևէ կերպ կառնչվի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված որևէ հիմնական իրավունքի կամ ազատության, պետք է բավարարի նշված 25-րդ հոդվածի պահանջներին:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական արդյունքները կարող են օգտագործվել բոլոր այն դասընթացներում կամ հետագա գիտական հետազոտություններում, որոնք որևէ կերպ կառնչվեն սույն հետազոտության օբյեկտին և առարկային:

Հետազոտության մեջ ներկայացված առաջարկները կարող են կիրառվել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրացումը կանոնակարգող, բժշկության և կենսաբանության ոլորտներում եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու, մարդու վերարտադրողական կլոնավորումն արգելելու, ինչպես նաև մարդուն գիտական, բժշկական կամ այլ փորձերի ենթարկելու հետ կապված հասարակական հարաբերությունները կանոնակարգող օրենսդրությունը կատարելագործելու նպատակով, ինչը լուրջ գործնական ազդեցություն կունենա մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության հիմնական իրավունքը երաշխավորելու տեսանկյունից:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին նվիրված դասընթացների շրջանակներում պատրաստված նյութերում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, 3 (երեք) գլուխներից, դրանցում ընդգրկված 9 (ինը) պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլուխը** վերնագրված է «**Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը**», որը բաղկացած է երկու պարագրաֆներից՝ «Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը» և «Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը»:

«**Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը**» վերտառությամբ պարագրաֆում ներկայացվել են ՀՀ Սահմանդրության 25-րդ հոդվածի ձևակերպումները, կատարվել է հոդվածի վերլուծություն ներպետական և միջազգային իրավական այլ ակտերում առկա կարգավորումների համատեքստում, ուսումնասիրության առարկա են դարձվել գրականության մեջ առկա վերաբերելի մոտեցումները, միաժամանակ, համեմատականներ են անցկացվել խնդրո առարկա իրավունքի և ֆիզիկական ամբողջականության, ինչպես նաև ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքների միջև: Արդյունքում, իրավաբանական գրականության մեջ արտահայտված վերաբերելի մոտեցումների հառվառմամբ՝ առաջարկվել է ֆիզիկական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սեփական, հեղինակային սահմանումը, ինչպես նաև մատնանշվել են այդ իրավունքի բովանդակությունը կազմող համապատասխան տարրերը:

«**Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը**» վերտառությամբ երկրորդ պարագրաֆում վերլուծվել են քննարկվող իրավունքի վերաբերյալ ՀՀ Սահմանդրության 25-րդ հոդվածում առկա ձևակերպումները, դրա բովանդակությունը կազմող տարրերը, նշված իրավունքի վերաբերյալ ինչպես տեսական գրականության մեջ, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրների իրավասու դատարանների կողմից կայացված դատական ակտերում արտահայտված մոտեցումներն ու իրավական դիրքորոշումները, միաժամանակ, համեմատականներ են անցկացվել «հոգեկան անձեռնմխելիության» և «հոգևոր անձեռնմխելիության» հասկացությունների միջև: Կատարված վերլուծության արդյունքում, առաջարկվել է հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սեփական, հեղինակային սահմանումը:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** վերնագրվել է «**Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխիքները**»: Այն բաղկացած է երեք պարագրաֆներից՝ «Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխիքները», «Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխիքները» և «Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման դեպքերը և սկզբունքները» վերտառություններով:

«**Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխիքները**» վերտառությամբ պարագրաֆում տարբեր տեսական աղբյուրների, իրավական ակտերի, ինչպես նաև որոշ պետությունների բարձրագույն դատական մարմինների պրակտիկայի ուսումնասիրության լույսի ներքո ներկայացվել են ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխիքներին առնչվող մի շարք արդիական հիմնախնդիրներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադարձ է կատարվել նշյալ ոլորտում պետության պոզիտիվ պարտականություններին, ներկայացվել են գիտագործնական բնույթի առաջարկություններ, մատնանշվել են ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ հանրային իշխանության հարգանքը և պաշտպանությունը՝ որպես պարտականություն, ձևավորող գործողությունները:

«**Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխիքները**» վերտառությամբ երկրորդ պարագրաֆում տարբեր իրավական ակտերի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրության լույսի ներքո ներկայացվել են հոգեկան անձեռնմխելիության իրավունքի երաշխավորման կառուցակարգերին առնչվող մի շարք արդիական հիմնահարցեր: Անդրադարձ է կատարվել նաև նշված իրավունքի երաշխավորման քաղաքացիաիրավական, վարչաիրավական և քրեաիրավական կառուցակարգերին: Բացի այդ, առանձին քննարկման առարկա են դարձվել հոգեկան խանգարումներ ունեցող անձանց հոգեկան անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Իրականացված վերլուծության հիման վրա կատարվել են որոշ տեսական ընդհանրացումներ և ներկայացվել են գիտագործնական բնույթի մի շարք առաջարկություններ, մասնավորապես մատնանշվել են հոգեկան անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ հանրային իշխանության հարգանքը և պաշտպանությունը՝ որպես պարտականություն, ձևավորող գործողությունները:

«**Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման դեպքերը և սկզբունքները**» վերտառությամբ պարագրաֆում ներկայացվել են ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանափակմանն առնչվող մի շարք արդիական հիմնահարցեր: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել նշված իրավունքի սահմանափակման հիմքերին, սկզբունքներին, ինչպես նաև դրանց արդյունավետ իրականա-

ցումն ապահովող իրավական երաշխիքներին ու կառուցակարգերին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այնպիսի հասկացությունների բովանդակության բացահայտմանը, ինչպիսիք են «ազգային անվտանգություն», «հասարակական կարգ», «բարոյականություն» և այլն: Վերլուծության արդյունքում նախանշվել են այդ իրավունքի սահմանափակման իրավական չափորոշիչները:

Ատենախոսության **երրորդ գլուխը** վերնագրվել է «**Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին միջամտելու՝ սահմանադրությամբ արգելված դեպքերը**», որը բաղկացած է չորս պարագրաֆներից՝ «Բժշկության և կենսաբանության ոլորտներում եվգենիկական փորձերի արգելքը», «Բժշկության և կենսաբանության ոլորտներում մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու արգելքը», «Բժշկության և կենսաբանության ոլորտներում մարդու վերարտադրողական կլոնավորման արգելքը» և «Գիտական, բժշկական կամ այլ փորձերի թույլատրելիության սահմանները»:

«**Բժշկության և կենսաբանության ոլորտներում եվգենիկական փորձերի արգելքը**» վերտառությամբ պարագրաֆում անդրադարձ է կատարվել եվգենիկայի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տրված բնորոշումներին, դրանց տեսակներին և նպատակներին: ՀՀ Սահմանադրության համապատասխան նորմերի վերլուծության հիման վրա հստակեցվել է պետության պարտականությունը կարգավորել բժշկության և կենսաբանության ոլորտներում եվգենիկական փորձերի արգելքի հետ կապված հարաբերությունները՝ հաշվի առնելով ինչպես մարդու իրավունքները կարգավորելիս ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պահանջները, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Իրականացված համալիր հետազոտության հիման վրա կատարվել են համապատասխան առաջարկներ օրենսդրական և գործնական խնդիրների լուծումների վերաբերյալ:

Մասնավորապես՝ առաջարկվել է Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նորմի սահմանադրաիրավական բովանդակության մեջ մատնանշել ոչ թե «եվգենիկական փորձեր» եզրույթը, այլ՝ հենց «եվգենիկական գործունեություն» եզրույթը, Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նորմի սահմանադրաիրավական բովանդակության մեջ կատարել համարժեք փոփոխություն, որ սահմանադրական արգելքը տարածվի բացառապես պոզիտիվ եվգենիկայի վրա, համարժեք օրենսդրական լրացում անել նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքում՝ հստակ բացառություն նախատեսելով նեգատիվ եվգենիկան, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման և բիոէթիկայի ոլորտում այլ հանրորեն վտանգավոր արարքների կատարման համար ՀՀ գործող քրեական օրենսգրքում մի շարք օրենսդրական լրացումների միջոցով նախատե-

սել քրեաիրավական պատասխանատվություն:

«Բժշկության և կենսաբանության ոլորտներում մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու արգելքը» վերտառությամբ պարագրաֆում ներկայացվել են սահմանադրական այս արգելքի բովանդակության վերաբերյալ ինչպես տեսական գրականության մեջ առկա տարաբնույթ մոտեցումները, այնպես էլ դրա վերաբերյալ մի շարք երկրների իրավասու դատարանների կողմից կայացված դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Արձանագրվել է, որ ՀՀ Սահմանդրությունը չի արգելում օրգանների և հյուսվածքների փոխպատվաստումը, այլ միայն արգելում է մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը:

Իրականացված վերլուծության հիման վրա ներկայացվել են գիտագործնական բնույթի մի շարք կարևոր առաջարկներ, մասնավորապես՝ միանալ ոլորտը կարգավորող միջազգային փաստաթղթերին, այդ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու միջոցով պայքարել մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու երևույթի դեմ, լիարժեք կանոնակարգել օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման ողջ գործընթացը, օրենսդրությամբ հստակ սահմանել օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման գործընթացի բոլոր մասնակիցների, միջնորդների և այս գործընթացին առնչվող այլ անձանց իրավունքները և պարտականությունները, որպեսզի այս արգելքը գործնականում երաշխավորվի, բոլորի համար ստեղծել հավասար պայմաններ օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման գործընթացից օգտվելու համար: Վերաբերելի օրենսդրության շրջանակում համապատասխան կարգավորումներ սահմանել և հետևողականորեն կատարելագործել դրանք Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանադրական նորմի քրեաիրավական պաշտպանությունը գործնականում ապահովելու համար, այլապես այդպիսի պաշտպանության մասին պարզապես խոսք լինել չի կարող:

«**Բժշկության և կենսաբանության ոլորտներում մարդու վերարտադրողական կլոնավորման արգելքը**» վերտառությամբ պարագրաֆում ներկայացվել են վերարտադրողական կլոնավորման հասկացության վերաբերյալ ինչպես գիտության մեջ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում եղած տարաբնույթ մոտեցումները, դրա բացարձակ արգելքի բովանդակությունը: Արդյունքում արվել են որոշ առաջարկներ:

«**Գիտական, բժշկական կամ այլ փորձերի թույլատրելիության սահմանները**» վերտառությամբ պարագրաֆում ներկայացվել են քննարկվող հարցի վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորումները, որոնց վերաբերյալ իրականացվել է համալիր հետազոտություն, մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել մարդկանց ներգրավմամբ հետազոտությունների իրականացմանն հարցերն ընդգրկող

Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիային, որի՝ 16-րդ հոդվածը նվիրված է այն անձանց պաշտպանությանը, որոնք հանդես են գալիս որպես փորձարկվողներ:

Առանձին անդրադարձ է կատարվել նաև փորձերի «հնարավոր հետևանքներ» հասկացությանը: Արդյունքում նախանշվել են այդ հասկացության բովանդակության մեջ ներառման ենթակա մի շարք տարրերը:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական եզրահանգումները.

- Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքն առանցքային նշանակություն ունի մարդու արդյունավետ կենսագործունեության համար, ու դրա պահպանումը և երաշխավորումն ուղղակիորեն կապված են նաև այլ հիմնական իրավունքների պահպանման և պաշտպանության հետ, ինչպիսիք են կյանքի իրավունքը, անձնական ազատության իրավունքը, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը և այլն:

Վերլուծելով իրավաբանական գրականության մեջ արտահայտված վերաբերելի մոտեցումները՝ առաջարկում ենք ֆիզիկական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի հետևյալ սահմանումը.

- Ֆիզիկական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը պետության կողմից ճանաչված և երաշխավորվող իրավազորությունների ամբողջությունն է, որն ուղղված է անձի մարմնի ամբողջականությունը երաշխավորելուն, անձի կողմից իր հայեցողությամբ սեփական մարմնի ճակատագիրը որոշելուն, դրան որևէ ոչ իրավաչափ միջամտություն թույլ չտալուն:
- Ֆիզիկական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի բովանդակությունն են կազմում առնվազն հետևյալ տարրերը.
- Ազատորեն որոշելու իր մարմնի ճակատագիրը, այդ թվում՝ ցանկացած իրավաչափ եղանակով այն տնօրինելը:
- Ազատորեն և իր կամքին համապատասխան տնօրինելու իր սեռական կյանքը:
- Պաշտպանելու և վերահսկելու իր մարմինը և պետությունից պահանջնելու, որ հանրային իշխանության որևէ մարմին կամ պաշտոնատար անձ չմիջամտի իր մարմնի ամբողջականությանը և իր ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին:
- Պետությունից պահանջելու՝ արդյունավետ միջոցներ ձեռնարկել, որպեսզի որևէ այլ սուբյեկտ չմիջամտի իր ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին:
- Պետությունից պահանջելու, որ արդյունավետ իրավական միջոցներ ձեռնարկվեն իր ֆիզիկական անձեռնմխելիության խախտված իրավունքը վերականգնելու և պատճառված վնասը փոխհատուցելու համար:
- Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի բաղկացուցիչ մաս են

կազմում նաև Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասում *(Բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:)* և 4-րդ մասում *(Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:)* ամրագրված դրույթներից բխող իրավազորությունները:

- Հոգեկան անձեռնմխելիության իրավունքը հիմնարար նշանակություն ունի ոչ միայն անձի բնական կենսագործունեությունը երաշխավորելու, այլ նաև նրա հիմնարար այլ իրավունքներից արդյունավետորեն օգտվելը երաշխավորելու տեսանկյունից:

Վերլուծելով իրավաբանական գրականության մեջ արտահայտված վերաբերելի մոտեցումները՝ առաջարկում ենք հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի հետևյալ սահմանումը.

- Հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը պետության կողմից ճանաչված և երաշխավորվող իրավազորությունների ամբողջություն է, որն անձին հնարավորություն է տալիս իր զարգացվածության, կրթվածության, պատկերացումների հիման վրա առանց որևէ ոչ իրավաչափ միջամտության զարգացնել իր հոգեկան աշխարհի մտավոր, զգացմունքային, կամային և գիտակցական ոլորտները, ձևավորել սեփական ինքնությունը, հաստատել և զարգացնել հարաբերություններ այլ մարդկանց ու արտաքին աշխարհի հետ: Այս իրավունքի առանցքն է կազմում մարդու կողմից ձևավորված և գիտակցված կամքը:
- Հոգեկան անձեռնմխելիության իրավունքն անձին չի պաշտպանում իր հոգեկան աշխարհի վրա այնպիսի ազդեցություններից, որոնք անխուսափելիորեն բխում են այդ անձի կողմից իր հիմնական այլ իրավունքներն իրացնելու գործընթացից:
- Հոգեկան անձեռնմխելիության իրավունքը ենթադրում է պետության պարտականությունը՝ երաշխավորելու, որ ոչ հանրային իշխանության անունից հանդես եկող սուբյեկտները, ոչ էլ այլ անձինք ոչ ֆիզիկական բնույթի հոգեկան հարկադրանքի օգնությամբ չխեղաթյուրեն մարդու ձևավորված և գիտակցված անհատական կամքը:
- Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի բաղկացուցիչ մաս են կազմում նաև Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասում *(Բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:)* և 4-րդ մասում *(Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:)* ամրագր-

ված դրույթներից բխող իրավազորությունները:

- Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ հարգանքը և պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են, որ ներառում են առնվազն հետևյալ գործողությունները.

1. Հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորություններից որևէ մեկին միջամտելուց՝ բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակման դեպքերի, և այն չափով, ինչ չափով, որ թույլ են տալիս համաչափության և իրավական որոշակիության սկզբունքները:

2. Հանրային իշխանությունը պարտավոր է արդյունավետ ընթացակարգեր և կառուցակարգեր ամրագրել, որոնք և՛ օրենսդրական մակարդակում, և՛ գործնականում կերաշխավորեն, որ ցանկացած անձ ձեռնպահ մնա ֆիզիկական անձեռնմխելիության բովանդակությունը կազմող իրավազորություններից որևէ մեկին միջամտելուց:

3. Հանրային իշխանությունը ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին առնչվող գործունեություն իրականացնող սուբյեկտներին թույլտվություն տրամադրելիս կամ լիազորություն պատվիրակելիս պարտավոր է ամրագրել այնպիսի պահանջներ, որոնք տվյալ գործունեության ընթացքում կերաշխավորեն ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ հարգանքը:

- Բնապահպանական ոլորտը կարգավորելիս հանրային իշխանությունն իր հանրային քաղաքականությունը և դրա հիման վրա կոնկրետ գործընթացները պետք է այնպես կազմակերպի, որ նվազագույնի հասնի անձի առողջության վրա առկա և/կամ առաջացող բացասական ազդեցությունը:

- Հանրային իշխանությունը պարտավոր է իրավական արդյունավետ միջոցներ ձեռնարկել ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին ոչ իրավաչափ միջամտությունը կասեցնելու, իսկ արդեն խախտված իրավունքի դեպքում, դրա արդյունավետ վերականգնումը և դրա հետևանքով պատճառված վնասի, այդ թվում՝ բարոյական վնասի փոխհատուցումը երաշխավորելու համար:

- Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ հարգանքը և պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են, որոնցից բխում են առնվազն հետևյալ պարտականությունները.

1. Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի նպատակն է ապահովել պետության կողմից երաշխավորված՝ մարդու հոգեկան անվտանգությունը, որը ներառում է հանրային իշխանության մարմինների, դրա պաշտոնատար անձանց կամ այլ անձանց կողմից այդ իրավունքին միջամտելու արգելքը, կանխումը և դրա համար պատասխանատվությունը՝ բացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի և կարգի:

2. Հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք

պարտավոր են ձեռնպահ մնալ հոգեկան անձեռնմխելիության բովանդակությունը կազմող իրավազորություններից որևէ մեկին միջամտելուց՝ բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակման դեպքերի, և այն չափով, ինչ չափով, որ թույլ են տալիս համաչափության և իրավական որոշակիության սկզբունքները:

3. Հանրային իշխանությունը պարտավոր է արդյունավետ ընթացակարգեր և կառուցակարգեր ամրագրել, որոնք և՛ օրենսդրորեն, և՛ գործնականում կերաշխավորեն, որ ցանկացած անձ ձեռնպահ մնա հոգեկան անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորություններից որևէ մեկին միջամտելուց:

4. Հանրային իշխանությունը պարտավոր է իրավական արդյունավետ միջոցներ ձեռնարկել հոգեկան անձեռնմխելիության իրավունքին ոչ իրավաչափ միջամտությունը կասեցնելու, իսկ արդեն խախտված իրավունքի դեպքում, դրա արդյունավետ վերականգնումը և դրա հետևանքով պատճառված վնասի, ներառյալ՝ ոչ գույքային վնասի փոխհատուցումը երաշխավորելու համար:

- Հոգեկան առողջության օրենսդրական սահմանման մեջ ներառված իրավազորությունների շրջանակը համընկնում է հոգեկան անձեռնմխելիության իրավունքի մեջ մտնող իրավազորությունների շրջանակի հետ, չնայած որ հոգեկան առողջությունը հոգեկան անձեռնմխելիության իրավունքի բաղկացուցիչ մաս է, այլ ոչ թե համարժեք հասկացություն: Բացի այդ, հոգեկան առողջության պահպանումը հոգեկան առողջության ոլորտում հոգեկան խանգարումների կանխարգելումն է և այդ նպատակով համապատասխան աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, որի շրջանակներից դուրս է մնում հոգեկան առողջության վրա հոգեկան խանգարումներից բացի այլ ազդեցությունները հանրային իշխանության մարմինների կամ այլ անձանց կողմից:
- Օրենսդրական փոփոխությունների միջոցով անհրաժեշտ է ամրագրել ոչ թե անձնական անձեռնմխելիության իրավունք, այլ հոգեկան անձեռնմխելիության իրավունք, իսկ գործընթացներն այնպես կարգավորել, որ օրենքը բավարարի իրավունքի գերակայության սկզբունքի մաս կազմող իրավական որոշակիության սկզբունքին:
- ՀՀ գործող քրեական օրենսգրքում համապատասխան օրենսդրական լրացման միջոցով անհրաժեշտ է օրինադրույթ նախատեսել առ այն որ ՀՀ քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն:
- Սահմանադրությունը հստակ սահմանում է այն կոնկրետ նպատակները, որոնց հասնելու համար ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել:
- Թեև օրենսդիրն օժտված է ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը սահմանափակելու լիազորությամբ, որը, սակայն, ան-

սահմանափակ հայեցողություն չէ և կարող է իրացվել բացառապես Սահմանադրությամբ նախատեսված կոնկրետ որոշակի սկզբունքների և պահանջների պահպանմամբ:

- Օրենսդիրը, սահմանափակելով ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, պարտավոր է հստակ հիմնավորել այդօրինակ սահմանափակման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն միջոցների անհրաժեշտությունը, որոնք կիրառվում են նման սահմանափակման համար:
- Օրենսդիրը, սահմանափակելով ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, հստակ պետք է ներկայացնի սահմանափակման հիմքը և ծավալը:
- Հակառակ պարագայում օրենքը, որով սահմանափակվում է ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, չի համարվի իրավական օրենք:
- Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակումները պետք է չլինեն այնպիսին, որ խեղաթյուրեն այդ իրավունքի բուն էությունը:
- Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման առավելագույն ծավալները չեն կարող գերազանցել Կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայում թույլատրված ծավալները:
- Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նորմի սահմանադրաիրավական բովանդակության մեջ ավելի ճիշտ կլինի մատնանշել ոչ թե «եվգենիկական փորձեր» եզրույթը, այլ՝ հենց «եվգենիկական գործունեություն» եզրույթը:
- Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նորմի սահմանադրաիրավական բովանդակության մեջ պետք է կատարվի համարժեք փոփոխություն և սահմանադրական արգելքը տարածվի բացառապես պոզիտիվ եվգենիկայի վրա:
- Այնուհետ, համարժեք օրենսդրական լրացում պետք է արվի նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքում՝ հստակ բացառություն նախատեսելով նեգատիվ եվգենիկան:
- ՀՀ գործող քրեական օրենսգրքում մի շարք օրենսդրական լրացումների միջոցով անհրաժեշտ է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման և բիոէթիկայի ոլորտում այլ հանրորեն վտանգավոր արարքների կատարման համար նախատեսել քրեաիրավական պատասխանատվություն:
- ՀՀ Սահմանդրությունը չի արգելում օրգանների և հյուսվածքների փոխպատվաստումը, այլ միայն արգելում է մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը:

• Անհրաժեշտ է միանալ ոլորտը կարգավորող միջազգային փաստաթղթերին, որը հնարավորություն կտա, ընդունելով այլ երկրներում ընդունված միասնական մոտեցումները, այդ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու միջոցով պայքարել մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու երևույթի դեմ, քանի որ դրա վտանգավորությունը պայմանավորված է նաև նրանով, որ օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը կրում է միջազգային ցանցային բնույթ:

• Որպեսզի այս արգելքը գործնականում երաշխավորվի, անհրաժեշտ է լիարժեք կանոնակարգել օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման ողջ գործընթացը:

• Պետք է օրենսդրությամբ հստակ սահմանել օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման գործընթացի բոլոր մասնակիցների՝ բժշկական անձնակազմի, բուժքույրական անձնակազմի, տեխնիկական անձնակազմի, միջնորդների և այս գործընթացին առնչվող այլ անձանց իրավունքները և պարտականությունները:

• Բոլորի համար ստեղծել հավասար պայմաններ օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման գործընթացից օգտվելու համար:

• Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանադրական նորմի քրեաիրավական պաշտպանության համար բացարձակ անհրաժեշտություն է վերաբերելի օրենսդրության շրջանակում համապատասխան կարգավորումների սահմանումն ու կատարելագործումը, այլապես այդպիսի պաշտպանության մասին պարզապես խոսք լինել չի կարող:

• Որպես օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու դեպքեր չեն կարող դիտարկվել այն փոխհատուցումները, վճարումները, ողջամիտ պարգևները, որոնք կապված են մի կողմից փոխպատվաստման արդյունքում անձի ունեցած կորուստների հետ *(չստացած աշխատավարձը կամ օրինական այլ եկամուտը, որն անձը կստանար որպես դոնոր հանդես չգալու դեպքում, ինչպես նաև օրգաններ կամ հյուսվածքներ վերցնելուց հետո անձի առողջությունը պահպանելուն ուղղված ծախսեր)* և մյուս կողմից օրգանների պահպանման, փոխադրման, դեղորայքի, տեխնիկական սպասարկման ապահովման ծախսերի հետ:

• Մարդը կարող է իր պատկերացումների, ընկալումների, համոզմունքների, արժեքային համակարգի շրջանակներում հանդես գալ որպես օրգանների ու հյուսվածքների դոնոր, այսինքն՝ կամավոր և իր հայեցողությամբ օգտվել ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքից:

• Օրգանները և հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու վտանգը կայանում է նրանում, որ նման հնարավորության առկայության դեպքում մարդը կարող է իր կամքից անկախ կամ իր կամքին հակառակ «դառնալ»

օրգանների և/կամ հյուսվածքների դոնոր, ինչը հակասում է կամավորության սկզբունքին, հետևաբար՝ կարող է հանգեցնել կյանքի, ֆիզիկական անձեռնմխելիության, արժանապատվության հարգման, հավասարության սահմանադրական իրավունքների խախտման:

- Մարդու վերարտադրողական կլոնավորման սահմանադրական պահանջն օրենսդրից պահանջում է հստակ սահմանել մարդու վերարտադրողական կլոնավորման հասկացությունը՝ հաշվի առնելով միջազգային փաստաթղթերում տրված բնորոշումները և ամրագրել քրեական պատասխանատվություն մարդու վերարտադրողական կլոնավորմանն ուղղված գործունեություն ծավալելու համար, ինչն ի դեմս ՀՀ գործող քրեական օրենսգիրքի 186-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված օրինակարգավորման, արդեն իսկ արվել է:
- ՀՀ Սահմանադրությունը մարդու ազատ և հստակ արտահայտած համաձայնության պայմաններում սկզբունքորեն չի արգելում մարդուն ենթարկել գիտական, բժշկական կամ այլ փորձերի:
- Սահմանադիրը, թեև շեշտադրում է «գիտական» կամ «բժշկական» հասկացությունները, սակայն դրանով չի սահմանափակվում:
- Սահմանադրության 25-րդ հոդվածի գործողությունը տարածվում է ցանկացած ոլորտի ցանկացած փորձի վրա՝ սոցիալական, տնտեսական, հոգեբանական և այլն՝ գիտական, թե ոչ:
- Ցանկացած փորձ, որը որևէ կերպ կառնչվի Սահմանդրությամբ երաշխավորված որևէ հիմնական իրավունքի կամ ազատության, պետք է բավարարի նշված 25-րդ հոդվածի պահանջներին:
- Մինչև որևէ փորձ իրականացնելը, օրենքով սահմանված կարգով, պետք է հիմնավորվեն դրա անհրաժեշտությունը, նպատակները, խնդիրները, որոնց լուծման համար պետք է օգտագործվեն արդյունքները:
- Մարդը կարող է ենթարկվել փորձերի, եթե առանց որևէ արտաքին ֆիզիկական կամ հոգեկան ազդեցության, ազատ կամարտահայտման միջոցով հստակ և գրավոր համաձայնություն է տվել մասնակցել որևէ կոնկրետ փորձի:
- Նախորդ կետում նշված պահանջն ապահովելու համար անհրաժեշտ է, որ մարդն ամբողջական տեղեկատվություն ունենա և լիարժեք պատկերացում կազմի իրականացվելիք փորձի վերաբերյալ: Սահմանադրությունն ամրագրում է, որ մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին: «Հնարավոր հետևանքներ» եզրույթին, կարծում ենք պետք է տրվի շատ լայն մեկնաբանություն՝ դրա բովանդակության մեջ ներառելով առնվազն հետևյալ տարրերը՝

1. փորձի նպատակի և լուծվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն,
2. փորձի ողջ գործընթացի բոլոր փուլերի վերաբերյալ տեղեկատ-

վություն,

3. իր անձի հետ կապված ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և այլ կարճաժամկետ և/կամ երկարաժամկետ բոլոր հնարավոր հետևանքների մասին տեղեկատվություն,

4. նման հետևանքների պատճառով անձի կրած վնասների փոխհատուցման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Եվգենիկական փորձեր. տեսական-իրավական վերլուծություն և իրավական ամրագրման որոշ հիմնախնդիրներ սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում», Արդարադատություն, Երևան, 2017 թվական, 6 (41), 55-59 էջեր:

2. «Որոշ նկատառումներ հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ», Պետություն և իրավունք, Երևան, 2018 թվական, 1 (79), 23-32 էջեր:

3. «Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական հիմքերը», Հանրային կառավարում, Երևան, 2018 թվական, 3-4, 109-117 էջեր:

4. «Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխիքները», Դատական իշխանություն, Երևան, 2018 թվական, 3-4 / 225-226, 26-34 էջեր:

5. «Որոշ նկատառումներ բժշկության և կենսաբանության ոլորտներում մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու սահմանադրական արգելքի վերաբերյալ», Արդարադատություն, Երևան, 2018 թվական 3 (44), 34-43 էջեր:

6. «Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական կառուցակարգերը», Դատական իշխանություն, Երևան, 2018 թվական, 05-06 / 227-228, 27-33 էջեր:

7. «Գիտական, բժշկական և այլ փորձերի թույլատրելիության սահմանները. մարդու վերարտադրողական կլոնավորման արգելքը», Եվրոպական համալսարան, Երևան, 2022 թվական, 13 (02), 153-158 էջեր:

АРТУР СЕЙРАНОВИЧ НААПЕТЯН

"КОНСТИТУЦИОННЫЕ ОСНОВЫ ПРАВА НА ФИЗИЧЕСКИЙ И ПСИХИЧЕСКИЙ ИММУНИТЕТ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ"

РЕЗЮМЕ

Конституция Республики Армения претерпела существенные изменения на референдуме 6 декабря 2015 года. В результате поправок статья 25 Конституции РА не только закрепила право на физическую и психическую неприкосновенность как самостоятельное право, но и установила случаи, когда законодатель может ограничить это основное право человека. Частью 3 этой же статьи установлены такие виды деятельности, как евгенические эксперименты в области медицины и биологии, превращение органов и тканей человека в источник дохода, репродуктивное клонирование человека, которые прямо или косвенно могут привести к нарушению не только право человека на физическую и психическую неприкосновенность, но и к нарушению других основных прав. А в 4-й части той же статьи закреплены минимальные гарантии, при условиях которых возможно только подвергать человека научным, медицинским или иным опытам.

В свете изучения различных правовых актов, теоретических источников и практики высших судебных органов некоторых государствпредставлен ряд актуальных вопросов, связанных с гарантиями реализации права на физическую и психическую неприкосновенность. С учетом правовых позиций Европейского суда по правам человека сделана ссылка на позитивные обязанности государства в указанной сфере.

Представлен ряд актуальных вопросов, связанных с ограничением права на физическую и психическую неприкосновенность. В частности, были упомянуты основания и принципы ограничения указанного права, а также правовые гарантии и структуры, обеспечивающие их эффективную реализацию. Особое внимание было уделено выявлению содержания таких понятий, как «национальная безопасность», «общественный порядок», «нравственность» и др.

Рассматриваются также разные определения, типы и цели евгеники, приведенные как в отечественной, так и в зарубежной литературе.

Основываясь на анализе соответствующих норм Конституции РА, проясняется обязательство государства регулировать отношения, связанные с запретом евгенических опытов в области медицины и биологии, учитывая при этом требования, установленные Конституцией РА в области регулирования прав человека, и практикой органов, действующих на основе международных договоров о правах человека, ратифицированных РА.

Была сделана ссылка на Конвенцию Совета Европы о правах человека и биомедицине, охватывающую вопросы исследований с участием людей, статья 16 которой посвящена защите лиц, выступающих в качестве испытуемых. Отдельно упоминалось также понятие «возможных последствий» экспериментов. В результате был намечен ряд элементов, которые должны быть включены в содержание этой концепции. Представлены различные подходы к понятию репродуктивного клонирования, как в науке, так и в юридической практике, и содержание его абсолютного запрета.

Теоретическую основу исследования составили работы отечественных и зарубежных авторов, также были изучены и представлены судебные акты иностранных судов, консультативные заключения, разработанные международными институтами.

Научная новизна диссертации отразилась в изложенных положениях защиты, а также в теоретических обобщениях и практических рекомендациях, сделанных в заключении диссертации.

Предложения и анализы в диссертации могут быть использованы для устранения пробелов, недостатков и противоречий в законодательстве в сфере правотворческой деятельности, для внесения законодательных изменений, а также могут оказать положительное влияние на формирование единой правоприменительной практики.

Основные положения диссертации отражены в опубликованных автором научных статьях, а также представлены на различных научных конференциях.

ARTUR SEYRAN NAHAPETYAN

"THE CONSTITUTIONAL BASIS OF THE RIGHT TO HUMAN PHYSICAL AND MENTAL IMMUNITY IN THE REPUBLIC OF ARMENIA"

SUMMARY

The constitution of the Republic of Armenia underwent significant changes in the referendum of December 6, 2015.

As a result of the amendments, Article 25 of the RA Constitution not only established the right to physical and mental integrity as an independent right in Part 1, but also established in Part 2 the cases when the legislator can limit this basic human right. Part 3 of the same article established such types of activities as eugenic experiments in the fields of medicine and biology, making human organs and tissues a source of profit, human reproductive cloning, which may directly or indirectly lead to violation of not only to physical and mental integrity rights of a person, but also to violation of other basic rights. And the 4th part of the same article fixed the minimum guarantees, under the conditions of which it is only possible to subject a person to scientific, medical or other experiments.

In the light of the study of various legal acts, theoretical sources and practice of the highest judicial bodies of some states, a number of topical issues related to guarantees for the realization of the right to physical and mental integrity are presented.

Taking into account the legal positions of the European Court of Human Rights, reference is made to the positive obligations of the state in this area.

A number of topical issues related to the limitation of the right to physical and mental integrity have been presented. In particular, reference was made to the bases and principles of the limitation of the mentioned right, as well as the legal guarantees and structures ensuring their effective implementation.

Particular attention was paid to the identification of the content of concepts such as "national security", "public order", "morality", etc.

Various definitions, types and goals of eugenics, given both in domestic and foreign literature, are also considered. Analysing relevant constitutional provisions, he clarifies the obligation of the state to regulate relations related to the ban of eugenic practices in the field of medicine and biology taking into

account the requirements established by the Constitution of RA in the field of human rights and the practices of bodies acting on the basis of the international human rights treaties ratified by the RA.

Reference was made to the Council of Europe Convention on Human Rights and Biomedicine, which covers the issues of research involving human subjects, Article 16 of which is dedicated to the protection of persons acting as test subjects.

Separate reference was also made to the concept of "possible consequences" of experiments. As a result, a number of elements to be included in the content of that concept were outlined.

Various approaches to the concept of reproductive cloning, both in science and in legal practice and the content of its absolute prohibition have been presented.

The theoretical basis for the research are native and foreign authors' works, judicial acts of foreign courts, advisory opinions developed by international institutions were also studied and presented.

The scientific novelty of the dissertation is reflected in the presented provisions to be defended, and in the theoretical generalizations and practical recommendations made in the conclusion of the dissertation.

The proposals and analyzes in the dissertation can be used to eliminate gaps, shortcomings and contradictions in the legislation in the field of law-making activity, to make legislative changes, and can also have a positive impact on forming a unified law-enforcement practice.

The main provisions of the dissertation are reflected in scientific articles published by the author, and also presented at various scientific conferences.